№ 53 Մարտի 24 (Ապրիլի 5) 1881 Մարտի 24 (Ապրիլի 5) № 53

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ. կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Հասցէագրութիւնները գրվում են ռուսերէն
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիւրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարվում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռուսահայք և Թուրքահայք. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիա. Թիւրքիա.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր ժողովրդական գրականութիւնը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՀԱՅՔ ԵՒ ԹՈՒՐՔԱՀԱՅՔ

—

Որչափ կարողացայ նկատել այս երկու ամսուայ ընթացքում Կ. Պօլսի գանձիկլոփ, լրագրական յօդուածներ կարդալը տեղիս հայ հասարակութեան համար դառած է մի այնպիսի փողանցուկ ու բացէական գաւառականութիւն, որը առնում են փոփոխարար Պօլսեցիք իրանց օրգաններում նորցիչէկ ծուխը փայլեցնելու։ Բայց զգուշանում եմ նախապէս, որ այս մի քանի տողերով ես բնաւ մտադիր չեմ մի այդպիսի գաւառականութիւն տալ ձեր ընթերցողներին, այլ մտադիր եմ խօսել նոցա հետ մի կարեւոր հարցի մասին, որին կրկին վերադառնալը հարկաւ թէ կարող է տեղի ունենալ միւս անգամ։ Խօսք ձեր այս տեղի, այսպէս ասած «հասարակական գործիչների» վրա է, որոնք չը նայելով իրանց գործունէութեան արդիւնքի աննշանութեան, այնչափ բազմաթիւ են որչափ «երկնքի աստղերը և ծովի աւազը»։ Այդ բազմաթիւ «գործիչները» խմբուած են զանազան տեղեր և կանանց ընկերութիւնների մէջ, որոնցից իւրաքանչիւրը ունէ իր տպագրուած առանձին կանոնադրութիւնը, իսկ նորա մէջ Ներսէս Պատրիարքի որհնալից հովանաւորութիւնը։ Գիտեմ թէ Ներսէս Պատրիարքը չի կարող չօրհնել ամեն մէկին որ կը դիմէ նորան. բայց ի՞նչ արդիւնք են արտադրում Հայաստանի բարօրութեան համար օրհնած ձրիով սրբուած այդ բոլոր ընկերութիւնները— ահա՛ այդ է հետաքրքիր խնդիրը։ Հէնց այս մասին եմ հարկաւոր համարում խօսել Կ. Պօլսի լրագրութեան մէջ։

Ահա՛ երկու տարի է, որ Կ. Պօլսի մէջ սկսել են լոյս տեսնել բազմաթիւ եռանդոտ երիտասարդներ, որոնք ազնիւ և ազգօգուտ զգացմունքներից դրդուած, սկսել են զանազան ընկերութիւններ հաստատել «Հայաստանի մէջ լուսաւորութիւն տարածելու համար»։ Որովհետեւ խօսքը մի այնպիսի գործի վրա է, որը հասարակապէս մտածել է աշխարհի ամեն կողմի Հայերի արտին, փառաւորոյ բնական է, որ միւսնոյն ու կէս Ռուսահայերը եւ անտարբեր չէին կարող մնալ իրանց Կ. Պօլսի ազգայինների ջանքերին, այլ պիտի ամենայարէն օժանդակել նոցա իրանց նիւթական նպաստներով, որոնցից կախուած է գլխաւորապէս կարեւոր մինչև հիմայ էլ՝ Կ. Պօլսի գործիչների նպատակները յաջողութեամբ պսակվելը։ Բայց որովհետեւ Ռուսահայերից նպաստներ ձեռք բերելու համար հարկաւոր էր անշուշտ լրագրական պրոպագանդայի (ծանուցում) դիմել, փառաւոր Ռուսահայ լրագրութիւնը հէնց առաջին օրից ամենայն եռանդով ձեռնամուխ եղաւ զօրեղ պրոպագանդայի, որի արդիւնքը այնչափ եղաւ, որ մի քանի ամսուայ ընթացքում միայն «Մշակ» լրագրի խմբագրութիւնը կարողացաւ հասցնել «Արարատեան ընկերութեան» մօտ 17 հազար ռուբլի։ Բայց երբ վրա հասաւ անցեալ տարի Հայաստանին մի այնպիսի աղաղակուլից փորձանք, ինչպէս սովն էր, փառաւորոյ բնական էր, որ ինչպէս Ռուսահայ մամուլը, այնպէս և բոլոր հասարակութիւնը թողից առ ժամանակ «Հայաստանի լուսաւորութեան» հարցը և իր բոլոր բարոյական և նիւթական ուժերը նուիրեց սովի հարցին. թէ ո՞րչափ յաջողութեամբ պսակուեց մեր լրագիրների ջանքը այդ կողմից, գիտէ Կ. Պօլսի սովելոց մասնաժողովը։

Բայց երբ սովը սկսեց նուազել, Ռուսահայ մամուլը, ի հարկէ, իր ուշադրութիւնը կրկին պիտի նուիրէր Կ. Պօլսի վերակեցող գործիչների և ընկերութիւնների գործին. հաւատի լինելով որ այդ ընկերութիւնների գործը այնչափ կանոնաւոր և փառահեղ ընթացքի մէջ է, որ կարելի է բոլորովին հանգիստ խղճմտանքով շարունակել ընդունել կարել խեղճ Ռուսահայերի գլխին, առաջարկելով նոցա անդադար բաց պահել իրանց քսակները Կ. Պօլսի գործիչների համար։ Բայց, աւա՜ղ, երկու ամիս Կ. Պօլսի բնակվելով և ի մօտոյ ծանօթանալով այս տեղի գործիչներից առաջաւորների, ինչպէս և նոցա գործի ներքին (երեսի և տակոյ) ընթացքի հետ, ես հասայ այն տխուր եզրակացութեան, որ Կ. Պօլսի գործիչների վրա դրած մեր վստահութիւնը այնչափ չափազանցուած է եղել, որ մի տեսակ բարոյական յանցանք ենք գործել այնչափ խեղճ յանգնաւորներ թափել խեղճ Ռուսահայ հասարակութեան երեսին, մոլորեցնելով նորան անտարբերութեան մէջ դնելով իր հայրենեաց բարօրութիւնը։ Ասենք՝ ո՞րչափ են արժանի Կ. Պօլսի գործիչները Ռուսահայերի համակրութեան և օժանդակութեան, տեսնենք։

Ամբողջ երկու տարի է, որ Կ. Պօլսի ընկերութիւններից գլխաւորը մեզ հետ գրաւոր յարաբերութիւն ունէր, և կարծեմ միայն էլ մի անգամ յաւուր պատուիրան ու գործելիս Ռուսահայերի մօտ նորանց հետ անձամբ խօսելու համար, բայց ո՞ր ժամանակ են մտածել Կ. Պօլսի երիտասարդ գործիչները մեզ մանրամասն տեղեկութիւններ տալու իրանց ամենօրեայ գործունէութեան վրա, որով Ռուսահայ մամուլը կարողանար գոնէ ամիսը միանգամ, երկու ամիսը մի անգամ, երեք ամիսը մի անգամ ցոյց տալ իր նուիրատու ընթերցողներին թէ՝ ահա ձեր տուած փողերով ձեր սիրած Հայաստանը ի՞նչպիսի բարօրութեան է հասնում։ Բացի ապրեկան, իսկ երբեմն էլ որ և իցէ մի օգտաւէտ տեղեկութիւններից Կ. Պօլսի գործիչները մեզ ուրիշ չեն տուել. տալով էլ օգտաւէտ տեղեկութիւններ են տալիս մեզ, որովհետեւ երբէք որ և իցէ ուսումնարանի պատերի միջից դուրս եկած կենդանի նամակ մենք չ՛ենք ստացել, որով իմանայինք գիտակ թէ ո՞րտեղ է գիւղի, ո՞ր Վիլայէթում, ո՞ր Սանջաքում, ո՞ր Օխայում, ո՞րչափ բնակիչ կայ այդ գիւղի, քաղաքի թէ գիւղաքաղաքի մէջ. ինչո՞վ են պարապվում նորա բնակիչները. ի՞նչ բերքեր են հանվում այդ երկրից. ի՞նչ աղքատութիւն (բնակիչք) կայ նորա մէջ. ո՞րն է ժողովրդի նիւթական դրութիւնը. ինչո՞վ կարելի է նորա նիւթական դրութիւնը բարւոքել. ի՞նչ բերքեր կարելի է աղնուացնել ժողովրդի հարստութեան նպաստելու համար. ո՞րչափ երեխայք կայ նախակրթա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԷԹՆՈԼՕԳԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

—

c) Փախան անողի երգ

Փախած եմ անում մեր սարին,
Մտաւոր ընկնում իմ կարին (սիրածին).
Մէջքին է սրծաթէ քամար.
Մեռնեմ ունքի կամարին.
Ոսկեղէն սարքած սրած,
Մաշկեա տաշտուց կարած.
Փոքրուկ կարմիր էրէսը (երես).
Նարգիս էրէսին դրած.
Փախչում եմ կնքիթը.
Հագած եմ լաւ խաս չիթը.
Էրեկ ընկի էն սրին.
(Որ) կանեն մեր հարսնիքը.
Վերջս կայ է վերնոցը.
(Թող) կարմիր սրտիս խոցը.
Էրեկ կըտրած էն սրին.
(Որ) ծոցս կը մտնի ծոցը.
(Նաշկուն)*) քաղ ու քաղցին քար (քէրփ) ալլուր.
(Նաշկուն) վարդի ծաղին վարդ ալլուր.
(Ավիշկեն էլ) ընկի (ծխն) նման ալլշքան,
Մէկ լաւ սիրուն կար ալլուր.

Հայաստանում ամեն գարուն սկսած ապրիլից մինչև յունիսի կէսը երկու կամ երեք շաբաթը մի անգամ զաղէը (բամբակի սարերը) կանաչերի. քնքշիկ սարերը և բաւանները ծածկւում են, այսինքն ծաղկում են զանազան անպէտք բոյսերից. Այդ «փարուցանքը», «ջուրը և հունձը» ոտաբարգեցնող պարապմունքն է, քանի որ ընդհանրապէս «ձմեռվայ բանն» է. ամեն տան քաղցրերը—հասած աղջիկները և հարսները—պատրաստ են քաղելու սարերը. Եթէ բնակվել էք կամ ճանապարհորդել էք Հայաստանում, երեւի տեսած էք մեր գաւառների գողգոթաները. Ամեն բամբակի, քնքշիկի և ուրիշ սարերում տեսած կը լինէք աղջիկների «քաղհանուրներին» խումբերը և լսած կը լինէք նրանց երգերը և ամեն ծիծաղը.

Քաղհանուրները շարադրում են անթիւ երգեր. մեր բերած երգը նրանցից մէկն է. Երգերի ներքին միտքը և բովանդակութիւնը շատ զանազան են. բայց արտաքին կողմից նրանք բոլորը իրար շատ նման են,—այն է «քաղհանուրների երգերը» միշտ սկսվում են հետեւեալ երգակցով (припѣвъ).

«Նայ նայ նայ, նանայ նանայ, նանայ, նայ»։

Այս երգակցը կրկնվում է ամեն տան ընկերում.

d) Մէջլուսի (ասայլորդի) երգ.

Նէր նէր նէր նէր*)
Արա եմ գանէ մէջ գաշտին.
Գող (սատան) աղբրի (աղբիւր) կշտին.
Հարփ (հարփեր) մանէթ եմ տալ (տալ)
Իմ գոմէշների (գոմէշ) ճիտին (գոյգ).
Խարէզանի եղել եմ,*)
Գոմէշս պոչը գեղել եմ,**)
Աշքին սիրելու աւրից.
Ընկի (Ինքս) ես շատ պատել եմ.
Մէջիս ամեն է***) չամիչ
Սանձին է ալինց ծիրանեգիրից.
Կաշօրելուց ամ չունեմ,
Գանեմ եմ աշխարհի (աշխարհ) գամից (հողս).
Եա տարի բերքով տարի.
Շատ եմ ցանե եւ գարի.
Եթած (երթայ) մարս ապաշեմ
Ընծի մէկ աղջիկ հարի.

Բացի քաղհանուկցի և մէջլուսի երգերից կան եւ գութանաւորի (սորօբոսոր). Վերջացողի. Հօցողի (գոմէշ արածացնող) և հովուի անթիւ և զանազան երգեր. Հայ գիւղացին այնինչ աշխատանքի ձեռ չէ զգում առանց երգի. Ահա այս պատճառաւ եթէ գնաք գաւառ՝ օրինակ, գիւղերից ամեն ժամանակ դուք կը լսէք ինչպէս աղջիկների— այդ հայոց օրիորդներին. այնպէս եւ զանազան աշխատաւորների երգերի ձայնը. Ամեն տարի շարադրում են նոր երգեր. երգը մէկ գիւղից հասնում է միւսին. մէկ գաւառից միւսը. Զէ անցնում մի քանի ամիս և դուք յանկարծ, օրինակի համար Նշաւանեկայ գաւառի երգը լսում կը Երեւանայ նահանգում. Ամեն գաւառ այդ երգը համաձայնեցնում է իր բարբառին, այս պատճառով նրանց լեզուն ենթարկվում է մեծ փոփոխութեան.

Մեր ծոյլութիւնը և անգործութիւնն է պատճառը, որ ժողովրդի երգերը, նորա բանաստեղծութեան թանգագին պատուղը, կորչում է և մոռանալու մատնվում. Այսպիսի կերպով մենք զրկվում ենք հետաքրքիր նիւթից, որը կարող է մեզ ծանօթացնել նորա բանաստեղծական կեանքի հետ.

e) Իդիլլիա (ИДИЛЛІЯ)

Վիր (ուժ) ու վիր գանոթի ընդանք (անդանք)
ալ հագած կարմիր.
Մէջլումենց գանոթի ընդանք ալ հագած կարմիր.
Նիրանէի բաղի մէջին ալ հագած կարմիր.
Կարոսին քնած ուէտանք ալ հագած կարմիր.
Մարանին ծառին նստած ալ հագած կարմիր.
Մաղի բաղէն (բաղն) էրէսին ալ հագած կարմիր.
Բուշախով (երկաթաձող) աղէն գաղին ալ հագած
կարմիր.
Բաղդադին ձեռին բռնած ալ հագած կարմիր.
Ճանճիկին քշող ուէտանք ալ հագած կարմիր.

Ահա այս երգի բովանդակութիւնը. գիւղի աղջիկները զուգված, զարդարված (ալ ու կարմիր հագած), անցնում են Մէջլումենց գանոթով և նկատում են հետեւեալ տեսարանը. Մէջլումի որդի Կարոսն քնած է ծիրանի այգու մէջ. իսկ նրա նշանած Մարանը նստած գաղին իր աղէն և Բաղդադի աղջունքը ձեռին բռնած քշում է սամանների երեսից ճանճերը. Ահա գիւղացու կարծիքով ամենապատշաճ իդիլը. ամեն երիտասարդ իրեն բոլորովին երջանիկ է համարում, երբ նա կարող է քնել և ծառի աշխատանքից յետոյ զովի տակ իր նշանածի ծնկան վրա և ընդ հանգստանալ ծառի շուքում. Սիրելի Նշաբաների մէջ. քանի՞ նախադրեալներ կայ. ինչ պրոգրամով (ծրագիր) դաստիարակւում նոցա մէջ. որո՞նք են դաստիարակները. ի՞նչ դաստիարակութիւն են տուել իրանք դաստիարակողները, և այլն և այլն։ Թո՛ղ ընթերցողը չը սարսափէ, որ այս ամենը գրելը շատ դժուարութիւն է. ո՛չ, շատ աւելի հեշտ է, քան թէ այն զարգանք փիլիսոփայութիւնները, որոնցով լցնում է իւրաքանչիւր Կ. Պօլսեցին իր յօդուածները և նաև մամուլ խօսակցութիւնը . . . . Մինչդեռ փոխանակ այսպիսի բաների մեզ տալու, որով կարելի կը լինէր նախ՝ ծանօթացնել Ռուսահայերին իրանց սիրած Հայաստանի ժողովրդագրութեան, տեղագրութեան և հասարակական դրութեան ու պայմանների հետ, երկրորդ՝ աւելի մեծ և եռանդայից նպաստներ տալ. Կ. Պօլսի գործիչները միայն տալիս են մեզ. „Ըստ հայ „Արարատեան", „Մխիթար", „Ռուսանաւորաց", „Արևմտասիրաց", „Հայրենասիրաց" և չը գիտեմ էլ ինչ փքուն ու առոգինի ընկերութիւններ, որոնց կանոնադրութիւնը այս է և նպատակը ի հարկէ շատ մեծ բան մ՛է՝ Հայաստանի մասալ, բարոյական և նիւթական վիճակը բարւոքել։ „Մէկը հարցնէ՝ ո՞ր Հայաստանի, այն Հայաստանի, որին ոչ իրանք են ճանաչում և ոչ մենք։ Պարոններ, մինչ Բոսֆորի ափերում նստած, առանց մի հիմնաւոր տեղեկութիւն ունենալու, առանց մանրազնաւոր Հայաստանը ուսումնասիրելու, կարելի՞ է թղթի վրայ լուսաւորութեան ծրագիր կազմել և համ մեզ անոր յոյսերով կերակրել, համ էլ ձեզ. սա խօմ զուարճութեան առարկայ չէ, որ բէզիկի (թղթախաղ) փոխանակ "Հայաստանի լուսաւորութիւն„ սարքած խաղալիքը հնարել ու զուարճով ժամանակ անցնել . . . Բայց թողնենք այդ ամենը, զարմանալ ցանկալի է իմանալ ի՞նչ երեսով են Կ. Պօլսի գործիչները մեզնից նիւթական նպաստների սպասում, երբ իրական Հայաստանի վրայ (այլ ոչ այն վերացական, որի վրայ այնչափ յաւ առանաւորներ են գրում Կ. Պօլսի „հայրենասէրները" իրանց փառաւոր քէօշքերի մէջ), մեզ ոչինչ տեղեկութիւն ոչ տուած են և ոչ էլ տալիս են։ Այս բանի վրայ հարկաւո՞ր էր մտածել մի որ և է ժամանակ թէ ոչ․․․

---

*) Նշագրութիւնը հասկանալութեան ժամանակաւ բառ է, թողնում բառեր. ասում շատ անգամ երգերի միջը մէկնութեան է չէ հասկացվում. Այս պատճառաւ մենք փակագծերի մէջ դնում ենք համաձայնական բառերը և շարադասութիւնը.

*) Այս բացականչական բառերը—ինչպէս երգակցութիւն, կրկնվում են ամեն տան ընկերում.

*) Խարէզանք իւղում են որ կարող լինի և գոմէշների իւղելուց շատ չը գնացվի.

**) Եթէ գոմէշի պոչերը և ականջը ազատուած են, գեղեցկութեան համար կարմրեցնում են կինայով.

***) Ալան մի և նոյն է ինչ և ասացի «չամիչը» այն երկու փոքր, որոնց վրա կապուած է քամկար ասաքը.

ԳՐԻԳՈՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մարտի 22-ին հասաւ Թիֆլիս Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչ։

—

«Голосъ» լրագրին գրում են Թիֆլիսից հետևեալը. «Հետազիրը հաղորդեց որ Միջագետքում ժանտախտ է յայտնուել. Ինչպէս յայտնի է Միջագետքը գտնվում է Թիւրքաց Հայաստանի սահմանի վրայ։ Եթէ չընդունենք որ Թիւրքաց վարչութիւնը այնքան հարկաւոր և եռանդոտ կը լինի ժանտախտի դէպի Հայաստանը անցնելուն արգելելու համար, այն ժամանակ այդ ախտը կարող է անցնել և մեր Անդրկովկասեան սահմանները։ Բայց մինչև այժմ ոչինչ չենք լսում որ միջոցներ գործ դրվէին ժանտախտի մեր սահմաններին անցնելուն առաջն առնելու համար։»

—

Վարշավայից «Московск. Телеграфъ» լրագրին գրում են որ դիտաւորութիւն կայ՝ մի քանի փոփոխութիւններ կատարել Լեհաստանի ուսումնարանների մէջ. Գիմնազիաներում և բէալական դպրոցներում լեհական լեզուի դասաւանդութեանը աւելի մեծ նշանակութիւն կը տրվի. փոխանակ շաբաթական 12 ժամ, դիտաւորութիւն կայ 18 ժամ նշանակել լեհական լեզուի ուսումնասիրութեանը. Լեհական լեզուի դասաւանդութիւնը պարտադիր կը դառնայ Լեհաստանի պետական դպրոցներում. Վարշավայի համալսարանում հիմնվում է լեհական գրականութեան մի ամբիոն և այդ առարկայի համար արդէն նշանակված է մի պրոֆէսոր.

—

Լրագիրները հաղորդում են, որ Կազանի նախկին նահանգապետ Սկարիատինի արած զեղծումների, կամայականութիւնների և անիրաւութիւնների դատաստանական քննութիւնը արդէն աւարտված է և Սկարիատինի դէմ կազմված մեղադրական ակտը արդէն ստորագրված է սենատից։ Ուստի, ինչպէս լսվում է, այդ գործը կը քննվի սենատում. Սկարիատինի պաշտպան, ասում են, լինելու է Մոսկվայի երդուեալ հաւատարմատար Պլևակոն։

—

Ս. Պետերբուրգում այս օրերս կալանաւորված Սոֆիա Պերովսկայա, ինչպէս յայտնվել է, պատկանում է իր ծագումով և իր ազգականական կապերով հասարակութեան բարձր շրջաններին. Նրա ցուցմունքներով լրացվում է ձերբակալված քաղաքական յանցաւորների գործի վերաբերութեամբ կազմված մեղադրական ակտը. Լրագիրներից ոմանք կարծում են որ այդ կնոջ գործը կը քննվի միւս յանցաւորների հետ միասին, իսկ ոմանք կարծում են որ ջոկ կը քննվի։

—

Այն անձը, որ Թագաւորի դէմ երկրորդ ռումբ էր գցել, մեռաւ Կոնիւշեննեան հիւանդանոցի մէջ, առանց յայտնելու իր ազգանունը, այնպէս որ մինչև այժմ ոչ ոք չը գիտէ թէ նա ով է եղել. Երբ հիւանդանոցի մէջ քննիչը մի քանի անգամ հարցրեց վիրաւորվածին նրա ազգանունը, չարագործը երկու անգամ պատասխանեց «չը գիտեմ» փակեց աչքերը և այնուհետև ոչինչ չը խօսեց։

—

«Моск. Вѣд.» լրագրի մէջ Կատկովը մեղադրում է լեհացիներին, աշխատելով նրանց վրայ ստուեր գցել և պարզ ակնարկում է որ վերջին եղեռնագործութիւնը թելադրված է եղել լեհացիներից. Այդ անհիմն մեղադրանքին լեհացի մի յայտնի ազնուական, մարկիզ Վելեպոլսկի «Порядокъ» լրագրում տպված բաց նամակով այս օրերս պատասխանում է Կատկովին, պաշտպանելով լեհացիներին։

—

Մոսկվայի լրագիրները հաղորդում են, որ այդ քաղաքի Լուբեանսկի անուանված իգական դպրոցը, որի դասընթացքը կատարվում էր կլասիկական գիմնազիաների ծրագրի չափով, այժմ թոյլտւութիւն ստացաւ ընդարձակել իր ուսման ընթացքի պրոգրամը։

—

Լրագիրները լսել են որ Թագաւոր Կայսր Ալեքսանդր Ալեքսանդրովիչի թագադրութիւնը կը կատարվի սեպտեմբեր ամսին։

—

Մոսկվայի ընդհանուր ռուսաց արուեստագործական հանդէսի բացման օրը դեռ ևս որոշված չէ։

—

«Минута» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստր, կոմս Լօրիս-Մէլիքովի առողջութիւնը խախտված է. Անձինք, որոնք մօտ ծանօթ են կոմսի հետ, հաւատացնում են որ վերջին ամսուայ անցքերը ներգործեցին նրա առողջութեան վրայ ծանրակար կերպով. Ասում են որ առաւօտները, մանաւանդ, կոմսը իրան վատ է զգում և շատ անգամ արիւն է թքում։

—

Բոլոր ռուս համալսարանների ուսանողները իրաւունք ստացան հիմնել ընթերցարան, գանձարան և ճաշարան։ Ճաշարաններ հիմնելու համար ուսանողները պէտք է շրջանների վրայ բաժանվեն և ուսանողական իւրաքանչիւր շրջան պէտք է ունենայ մի պրոֆէսոր որպէս շրջանի առաջնորդ։

—

Կազանի համալսարանի ուսանողական ընթերցարանը Ռուսաստանի գրեթէ բոլոր խմբագիրներից ձրիաբար լրագիրներ և ամսագրեր ստանալով, յայտնել է լրագրով իր շնորհակալութիւնը բոլոր նուիրատուներին։

—

Մեզ հաղորդում են Դէրբէնդից գլխաւոր կենսական պիտոյքների հետևեալ գները։ Ալիւրի պուդը արժէ 90 մինչև 95 կոպ., գարին 65 կոպ., ոչխարի մսի ֆունտը 10 կ., տաւարի մսի ֆունտը 8—10 կ., իւղը արժէ 11 ր. 50 կ. մինչև 12 ր. պուդը, թխած հացը 3½ կոպ. Առևտուրը շատ սուստ է անցնում վաճառականների համար։

—

Բաշ-Նորաշէնից մեզ գրում են. «Առաքել Փոլունանանց արդէն պատրաստվում է իր սեփական ծախսով շինել տղայոց համար մի դպրոց, որ լինելու է երկու սենեակից. Դպրոցի շինութեանը մասնակից պիտի լինէ և հասարակութիւնը։ Հին դպրոցը վճռված է գործ ածել օրիորդաց դպրոցի համար։»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Քանի մի օրերից առաջ մի երևանցի հայ, Բարսեղ Շահպազեան, սպանվեցաւ Անգլիական այգիում անյայտ չարագործների ձեռքով. Սպանութիւնը, ասում են, փողի պատճառով է եղել. Երբ սպանութեան լուրը տարածվեցաւ քաղաքում, ամենքը շտապեցին անգլիական այգին, իսկ նահատակին տեսնելու համար. Սպանվածը 30 տարեկան երիտասարդ է. Դուք էլ նրա ազգանունը յիշելիս կը լինէք, քանի որ նա մի եղել է «Մշակի» բաժանորդ։»

—

«Մշակի» ներկայ համարում արտատպում ենք Կ. Պօլսի «Մասիս» լրագրից տ. Գրիգոր Նիկողոսեանի մի յօդուած «Ռուսահայք և Թիւրքահայք» վերնագրով. Դա յօդուածի առաջին մասն է, իսկ երկրորդը կը տպենք հետևեալ համարում։

—

«Голосъ» լրագրում կարդում ենք, որ մարտի 14-ին Մոսկվայի հայերի պատգամաւորութիւնը հասաւ Ս. Պետերբուրգ և նոյն օր նրան թոյլ տրվեցաւ երկրպագել Թագաւոր

նածի ծունկին նրա համար աւելի փափուկ է քան թէ «աթլազէ բարձը»*)։ Այս երգը համեմատում են ամէն մի երիտասարդի, երբ կամենում են նկարագրել և գովաբանել նրան մի բաղդաւոր տղայ։ Վերջին դիպուածքում Մէլքոնի տեղ դրած են անում երիտասարդի հօր անունը, Կարոյի տեղ երիտասարդի և Մարանի տեղ նրա սիրածի անունը։

e) Էլէգիա (Элегія)

Պանդուխտ հարսի երգը.
Ղարիբ կոչուն եմ ձեռով սարէն,
Աչքիցս թափվում արտասունք արուն,
Թաղանքեան սրտիս հարէն.
Փախի, որի հէրանցս (հայրենեաց) սարէն,
Մէ խաբար բեր իմ մօրէն.
Բլբուլ էի հէրանցս բաղին,
Դէլիս քզին (ձգել) կարմիր մաղին.
Բէրին զրին էս զաֆաւր (վանդակ),
Ձիգաւր շըլով (շամփուր) գաղին.
Դըշէր ցէրէկ լաց ու սուգ,
Էրէսիս կխաւրիս թուզ,
Մէ ուրախ որ չը ունոյ,
Հէրանցս զարծի *) արէն.
Սարերի (պատմ. լինոց) օձաին հանցնէր,
Ցանը կամբոնոց **) զանէր,
Բէրանը փակվէր, չորնէր,
Զը գէր (գար) մօրս աւէր.

«Աղջիկ տուր Մխօին».
Սարեր, ադի սեր չըլնես.
Հարսի էրէս չը տէսնես.
Հաւասաղով (փափուկ) ֆսղը մաննես.
Գէրէզմանից գլուխ չը պարենես.

Այս երգը մեզ ծանօթացնում է պանդուխտ ու իւր կամքին հակառակ մարդու առած հարսի դրութեան հետ։ Հարսը յիշում է իր կուսութեան օրերը, երբ նա տան կոչւում էր և այդտեղ ուրախ պէս ազատ էր։ Մարդու գնալուց յետոյ նրա ազատութեան վերջը հասնում է, և կէսարանց տանը, հարսի համար «վանդակ» է. Հարսը ունի առիթ զանգատելու, որովհետև հէնց առաջի «զարծի» օրից, բացի կէսրոջ նախատինքից, նա ոչ մի ուրախ օր չէ տեսել. «Դիշեր ցերեկ լաց ու սուգ, էրեսիս կխաւրիս թուզ» բառերը շատ լաւ ցոյց են տալիս նրա դրութիւնը. Նա աղաչում է ու ախտում հէրանց տան վրայ և խնդրում է քամուց «մի խաբար բերի նրա մօրէն»։ Հարսի անբաղդութեան պատճառը գնացածն է, որ առաջին անգամ խորհուրդ տուեց հարսի ծնողաց նրան «տալ Մխօին». Այն ինչ պատճառով աղջկայ հայրը առաջիկայ անէծք է թափում գնացածի գլխին. «Թող գնացածի օձերը հանցնէ, տունը աւերակ զանայ. Թող նրա բերանը չորանայ և փակվէր, որ նա չը յորդորէր հարսի մօրը «աղջիկը Մխօին տալ». Թող գնացածը ոչ որդի և ոչ հարսի երես տեսնի. Թող նրա փափագը սրտին մնանի և գերեզմանում հանգստութիւն չը գտնի։

g) Երգիծաբանական երգ (сатира).

Անէք գոլվանը (հարստութիւն) տանից հանէին*)
Վայն էկաւ գլխին ու ջանին.
Թօշից (գաղթել) իր տնով ու տեղով.
Գնաց, հասաւ զաւէշով (камышъ) փաշոյն.
Ա...են էկաւ գեղի գլաւա (глава),
Զօլախ (կաղ) Մոսոյին արաւ սուդեա (судья).
Կարոյին էլ գրեց իւր միրզայ (գրագիր).
Դիկօն էլ էկաւ գեղի հաւրայ.
Աչէչ (աչափ) խալխի (ժողովրդի) արն էր չալում,
Ազքաններին սիրտ տալում (քաջալերել).
Ասում էր. «քանի ես սաղ եմ (կենդանի),
«Ձեզ որդու նման կը պահեմ».
Չաղը (վրան) անելից փոշոքի չլամային (ահել),
Մէ գառ իշխւ արաղի ջանին. **)
Ասաւ. «Կարող. ճամերը բեր,
«Ուղղամէմ խաղալ էս գիշեր»
Դ...էգին էկան ժողով,
Խըար առեցին ածով դողով,
«Աստուած ձեր տունը քանդի,
«Ա...նը մեզ բէրեց ֆանդի *) (խորամանկութիւն).
«Ա...նը կէրաւ **) մեր փողը,
«Մեր գլխին տւեց սև խողը.
«Էլիկ էմանք (երթայ) Դ...գեղը.
«Էն տեղ լաւ է քանց էս տեղը».

Որպէս զի ընթերցողը կարդալուն մի պարզ գաղափար կազմէ այս երգի մասին, մենք հարկաւոր ենք համարում բացատրել՝ ինչ առիթով է նա շարադրված. Դ... գիւղումը կայ մի պարոն Ա... անունով. Ա... ինքն աղքատական է և առաջ շատ հարուստ էր. բայց դժբաղդաբար նա անմտաբար եղաւ թղթախաղի, «զէգախաղին», այնպէս որ բոլորովին վատնեց իր հարստութիւնը. Այս անբաղդութիւնից յետոյ նա վճռեց գաղթել փաշով (մի աւերակ Արարատ սահմանում) որպէս զի այնտեղ սկսի նոր կեանք. Ա... հետ գաղթեցին մի քանի տուն Դ... գիւղից. Գաղթականները ժողովել են յանձնել Ա...ին մի գումար. Այս վերջինը վատնեց այդ գումարը ևս, — մասամբ տանելով տանուլ, մասամբ «տունից արաղի». Գաղթականները տեսնելով Ա... խաբեբայութիւնը, կրկին վերադարձան Դ... գիւղը. Դ... գիւղացիք շարադրեցին գաղթականների վրայ այս երգը ու մինչև այժմ ծիծաղում են նրանց վրայ. Մենք այստեղ բերում ենք երգի միայն մի մասը.

h) Ծիսական երգեր.

Հարսանիքի երգ.

Բուն Հայաստանի գիւղերում ամուսնութիւն կայ գալիս *) վէրջին կամ ինչպէս ասում են գովորոքն է ասում «թագաւորին», թագաւորի լողացնելուց և հարսանեաց շորերը հագցնելուց յետոյ կանչնչացնում են սան մօտ այն տանը, որտեղ ժողովուած է բոլոր հրաւիրված բարեկամները. Ցզամարդիկ կազմելով մի պարաչխմբ, են գալիս թագաւորի չորս կողմով և ի պարի նրան գանազան երգեր երգում. Երգերից յետոյ թագաւորի քոյրը կամ հարսը (եղբօր կինը) մի ուրիշ կին նրա ազգականներից վեր է առնում մի կանաչ և կարմիր և պատ լուց յետոյ խրում է խնչան թագաւորի խէն արխալուղի տակ. այդ ազդւեները անուանում են «կապլամայ», ուստի և հանդէսը թէրթվում է «կապլամայ կապել». Ահա թագաւորի վաւանդի երգերից մի քանիսը.

---

*) Բռլիչ նուրբ փետուրով լցրած բարձ.

*) Թարգմանութիւն որ հարսանիքից յետոյ նորապսակ հարսին ծնողքը բերում են իրենց տուն. Այս հրաւէրը անուանվում է «հէրանց զարծ».

**) Կամբոնոց նշանակում է աւերակ. Կանանցը զանում են բաց մեծ մասին աւերակներում. Ուստի «տունդ կամբոնոց զանես» այդ նշանակում է տունդ աւերակ զանես.

*) Հան նշանակում է վէգ. Տալ հանին նշանակում է տանուլ տալ (проиграть).

**) «Մէ գառ իշխւ արաղի ջանին» ստորին խմեց արաղը.

**) Ֆանդի բերել—որոգայթ գնել մէկին.

**) Ուտել փողը նշանակում է վատնել.

*) Այս հարցով հետաքրքրվողներին խնդրում ենք կարդալ մեր յօդուածը «Հարսանիք» վերնագրով «Մշակի» վերջին համարներում 1872 թ.։

կայսրի մահին, որի դագաղի վրա հայերը դրեցին մի չքնաղ արծաթեայ պսակ, ժապաւէններով զարդարած, հետեւեալ արձանագրութեամբ. «Թագաւոր—Ազատողին, Ալէքսանդր II-ին, Հայոց եկեղեցու մեծ Հովանաւորին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալը: Հասարակութիւնը Անգլիայի մէջ այժմ շատ վատ է տրամադրուած։ Ազատամիտները, անդադար անաջողութիւնների հանդիպելով, իրանց անպատուած են համարում։ Դեռ մի տարի չէ անցել այն ժամանակից, երբ ընտրողական յաղթութիւնները նրանց մէջ ամենափայլուն յոյսեր զարթեցրին։ Ազատամիտ քաղաքագէտների ուրախութիւնը բաժանում էին նրանց կողմնակիցները բոլոր քաղաքների և գիւղերի մէջ: Կարգադրած խոստացած վերանորոգութիւնները պէտք է եռանդով իրագործվէին, Իռլանդիան պէտք է բաւականութիւն ստանար, անգլիական ֆինանսները պէտք է կանոնաւորվէին, առեւտուրը պէտք է ծաղկէր և այլն։ Բայց դրա փոխարէն հասարակութիւնը անաջողութիւնների հանդիպեց։ Անգլիացիները թողնում են Աֆղանիստանը ոչ թէ իրանց կամքով, որովհետեւ ազատամիտ կառավարութիւնը չէ հաւանում իր նախորդի քաղաքականութիւնը, այլ որովհետեւ Անգլիան յաղթվեցաւ Աֆղանի մէջ։ Աֆղանական պատերազմը առաջ գնահատված էր 1,200,000 ֆունտ ստերլինգ, իսկ այժմ այդ գումարը հասել է 20,000,000-ի։ Նոյնը պատահեց և Տրանսվաալի հետ։ Եթէ մի տարի առաջ այդ երկրին անկախութիւն տրվէր, ամենը կասէին, որ ազատամիտ կառավարութիւնը անիրաւացի է համարում իր նախորդի քաղաքականութիւնը, բայց այժմ ամենը համոզված են, որ բոէրները ձեռք բերին իրանց անկախութիւնը երեք անգամ անգլիական զօրքերին յաղթելուց յետոյ։

Բացի այդ Իռլանդիայի գործն էլ դեռ վերջացած չէ։ Ամենը հաստատում են, որ համայնքների ժողովը գործ կունենայ 45 կամ 50 իռլանդացի պատգամաւորների հետ, որոնք կամենում են արգելք դնել գործերի կանոնաւոր ընթացքին։ Մի և նոյն ժամանակ իռլանդացի պատգամաւորները ուժեղանում են և կողմնակիցներ են գտնում։

Ռուսաց կայսրի սպանման լուրը հասարակութեանը յայտնվեցաւ մարտի 2-ին։ Հանգուցեալ թագաւորը հեղինակութիւն չունէր անգլիական ոչ մի կուսակցութեան առաջ, բայց վերջին տարիները ամենը նրան համակրում էին նրա կեանքի դէմ ուղղած սպանութեան փորձերի պատճառով։ Կարելի է հաստատապէս ասել, որ ամենայեղափոխական անգլիացիները, թէև գտակարգին էլ նրանք պաշտպանէին, դատապարտում են կայսրի սպանութիւնը իբրև քաղաքական միջոց։ Ամենածայրայեղ անգլիական սոցիալիստները երբէք չեն առաջարկում և չեն արդարացնում այդպիսի միջոցներ։ Այս պատճառը ոչ թէ յարգանքն է դէպի ուրիշի կեանքը, կամ բարձր և բարոյականութեան նրբութիւնը, այլ մամուլի, հասարակական ժողովների և ընկերութիւնների կատարեալ ազատութիւնը, որ վայելում են անգլիացիները և որ խանգարում է գաղտնի դաւադրութիւնների կազմվելուն։ Անգլիայի մէջ ամենաարմատական և ծայրայեղ մարդիկ բացարձակ քարոզում են իրանց վարդապետութիւնները։ Վաղուց ամենը համոզված էին, որ թագաւորի փոխմանը Եւրոպայի մէջ մեծ փոփոխութիւնների տեղիք կը տայ, այդ պատճառով ամենը անհամբերութեամբ հետեւում են քաղաքական գործերի ընթացքին։

ԹԻՒՐՔԻԱ

Բ. Դուռը վերջապէս յայտնեց այն պայմանները, որոնցով նա համաձայն է վերջացնել յոյն-թիւրքական սահմանական վէճը։ Թիւրքաց կառավարութիւնը համաձայն է զիջանել Յունաստանին Կրիտ կղզին Բեռլինի կոնֆերենցիայից որոշված Լարիսսայի մասերի փոխարէն, բայց Թեսալիայի մէջ իր զիջումները սահմանափակում է այնպէս, որ Լարիսսա և Վոլօ թիւրքերին մնայ։

Հաւանական է, որ Յունաստանը չէ կարող բաւականանալ այդ զիջումներով։ Եթէ Լարիսան ձեռք բերելը յունական կառավարութեան համար ազգային ինքնասիրութեան հարց է, մի և նոյն ժամանակ Թեսալիայի միացնելը Յունաստանի հետ պահանջում են այդ երկրի տնտեսական շահերը։ Կրիտ կղզին չէ կարող փոխարինել այդ կորուստները։ Աւելի քան թէ կէս դարվայ փորձը ապացուցեց, որ Յունաստանը չէ կարող տնտեսական կողմից ծաղկել և զարգանալ այժմեան սահմաններով շրջապատված։ Թեսալիայի այն մասերը, որ Բեռլինի կոնֆերենցիան վճռեց տալ Յունաստանին, անհամեմատ հարուստ են բնական արդիւնաբերութեամբ, քան թէ Կրիտ կղզին և անհամեմատ յարմար են ծովային առեւտրի զարգացման համար։ Լարիսան և Թեսալիայի մի մասի փոխարէն Կրիտ կղզու ստանալը ոչ թէ միայն վնասակար կը լինէր Յունաստանի համար, այլ և բաւականութիւն չի տայ այն յոյներին, որոնց պատճառով յոյները առանց մտածելու, մեծ զոհաբերութիւնների գնով սարքեցին իրանց զօրքերը, որոնց թիւը շուտով 100,000 կը հասնի։

Զարմանալի չէ, ուրեմն, որ պետութիւնները թիւրքերի զիջումները բաւականացուցիչ չեն համարում և պահանջում են Յունաստանի համար Վոլօ և Լարիսսա։ Յայտնի չէ միայն արդեօք բոլոր պետութիւնները համաձայն են այդ պահանջի վերաբերութեամբ, թէ ոչ։

Ինչպէս երևում է, պետութիւնների բանակցութիւնները Բ. Դրան հետ վերջանում են։ Կ. Պօլսից հաղորդում են, որ երկու կամ երեք շաբաթի համար գործեր են մնացել։ Պէտք է 'ի նկատի ունենալ, որ սկսված բանակցութիւնների նպատակն էր որոշել այն զիջումները, որ Բ. Դուռը մտադիր է կամաւորապէս անել յօգուտ Յունաստանի։ Այդ հարցը վերջացնելուց յետոյ դեսպանները պէտք է որոշեն, թէ պետութիւնները ինչպիսի զիջումներ բաւական են համարում Յունաստանի համար և թէ Բ. Դուռը ինչպէս կը վերաբերվի նրանց պահանջներին։ Այսպիսով պետութիւնները պէտք է համաձայնութիւն ստանան Յունաստանից, որ նա կընդունի նրանց առաջարկութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մարտի։ Մոսկվայի աշխարհահանդէսը յետաձգված է մինչև եկող տարի։ Դատվեցաւ մարտի 1-ի եղեռնագործութեան վերջին մասնակցողը, որ Եկատերինոսլաւեան նահանգի բնակիչ է, Նիկոլայ Կիբալչիչ, քահանայի որդին։ Նա խոստովանվեցաւ, որ մարտի 1-ին գցած և Տելեժնայա փողոցի մէջ գտնված ռումբերը նա է պատրաստել։ Մարտի 26-ին նշանակված դատարանը չարագործների մասին յետաձգված է։ Երէկ ընտրվածներից քաղաքապետի խորհրդի համար 25 անդամներ ընտրվեցան։ Քաղաքապետը հաղորդեց երկու ազդեցական միջոցները. 1) հիմնել սահմանագծեր (заставы) մայրաքաղաքի բոլոր ճանապարհների վրա, 2) փակերցնել անցաթղթերը և պոլիցիական հսկողութիւն ունենալ երկաթուղով մայրաքաղաք եկողներից կասկածելիների վրա։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 մարտի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 12 կ., երկրորդ 93 ր. 25 կ., երրորդ 93 ր. 75 կ., չորրորդ 93 ր. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր., երկրորդ 217 ր. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 50 կ., երկրորդ 92 ր. 50կ., երրորդ 92 ր. 50 կ., ոսկի 7 ր. 93 կ։ Ռուսաց 1 րուբլ Լօնդոնի վրա արժէ 24,81 պէնս, Ամստերդամի վրա 125,50 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 211 մարկ 75 պֆ., Փարիզի վրա 262 ֆրանկ 50 սանտիմ։ Բորսայի տրամադրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի։ Կառավարչական հաղորդութիւն. Մալայա Սադովայա փողոցի մէջ գտնված ականի ամբողջ քննութիւնը, որի մասին յայտնված էր „Правит. Вѣстн." լրագրի № 52-ի մէջ, վերջացրած է և յանձնված է ներքին գործերի մինիստրին։ Որովհետև այդ գործը շարունակ ուշադրութիւն է գրաւում, Երէկ [illegible] գիծը։ „Голосъ" լրագիրը հաղորդում է. Սեվաստոպոլի մէջ կալանաւորված է և հասցրած է Օդեսա մի երիտասարդ, որ կեղծ բեխեր և միրուք ունէր։ Ս. Պետերբուրգի սահմանագծերի մօտ զինուորական պահապաններ են կանգնեցրած։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

1.

Գնացէք, ասէք էն (այն) խնամուն, էն քաւորին, էն սանահօրը զուռով (խէլբաղով) գինին, անդէ խոնչէն *) վերցնեն բերեն մեր թագաւորին. Գնացէք, ասէք էն աչերին, էն հարսերին, էն ազէքին զուռով գինին և այլն։ Գնացէք, ասէք էն սերտներին, էն իրեցփոխին, էն ժամհարին և այլն։

Այս երգի մէջ թուելով բոլոր ազգականների և գիւղի իշխանների անունը, հրաւիրում են նրանց տանեն զուռով գինին և գան թագաւորին շնորհաւորելու։

2.

Մեր թագաւորն է ալ,
Աչ քո խալ ու մալ,
Արևն է կարմիր
Կարմին է կանանչ (կանաչ).
Մեր թագաւորն է ալ *)
Աչ քո խալ ու մալ (աչքատակ խալ բառն է)
Արևն է կարմիր
Կարմինը կանանչ.
Մեր թագաւորն է ալ
Աչ քո խալ ու մալ,
Դոտին է գէղին,
Արևը կանանչ.

Այս երգի մէջ գովում են թագաւորի բոլոր հագուստը, նրանց կարմիր և կանանչ ածականներ (эпитетъ) տալով։ Կարմիր և կանանչ ածականները պատահականութեամբ ընտրված են (эмблема)։ Իսկ «ալը» բացի արեւելեան ժողովրդական լեզուով նշանակում է «կեանք»։ Մինչ կարելի է լսել այսպիսի բառեր «ալէզ կանանչի», «կանանչ ալէ գանձ» այսինքն կեանքը նորոգէ և երկարէ։

Բացի թագաւորի գովասանքից մի առանձին երգ նուիրում են հարսնացուի և սկեսուրի ամենական յատկութիւններին և տնտեսական գործերին, դիմելով սկեսուրին ասում են.

«Թագաւորի մեր (մայր) զօւ ...
«Ցէ՛ն ձեռ բըլը (ձեռ) եմ բերի (բերել)
«Ընչեր մեջեր *) եմ բերի,
«Թեկ գետի (չեն) զոզ (տոզ) եմ բերէ,
«Լեզուն (լեզու) **) կէս զոզ եմ բերէ,
«Թոնիր վառող եմ բերի.
«Փոշին հանող եմ բերի.
«Փեկ հաց թխող եմ բերի.
«Խմոր ածող եմ բերի
«Փէկ չոր կարող եմ բերէ,
«Պղինձ լուացող եմ բերի.
«Փախած անող եմ բերի.
«Ցորեն մաղող եմ բերի.

Երգը վերջանում է հետեւեալ բառերով.

«Փէկ ձեռն թագաւ (նոր ու թազէ)
«Նախուստ մաղալ *) եմ բերի,

Բացի այս տողերից երբեմն աւելացնում են...

«Ամենայն լուացող եմ բերի.
«Ջուրը խմող եմ բերի.
«Դզնիստ գեղից եմ բերի։

Բանաստեղծական կողմից վերջի երգը չունի մի առանձին նշանակութիւն. Բայց նա երեւելի է նրանով, որ նկարագրում է մեզ հարսի և սկեսուրի յարաբերութիւնները։ Տնտեսական կէտից հարսը ինչպէս նոր, թարմ ուժ փոխարինում է սկեսուրին։ Մինչև հարսանիքը սկեսուրը միայն «տանտիկինն» է, իսկ հարսը բերելու օրից նա հրաժարվում է իր տնտեսական իրաւունքից և պարտաւորութիւններից. Այն օրից հարսն է պարտաւոր—թոնիրը վառել, խմորը անել, հացը թխել և առհասարակ կատարել ժրաջան տան տիկնոջ թէ պարտքերն և թէ ներքին տնտեսական պարտաւորութիւնները։ Իսկ ինչ վերաբերվում է սկեսուրի և հարսի անձնական յարաբերութիւններին, երգի մէջ մենք նկատում ենք մի մեծ հակասութիւն. եթէ հարսը մէկ կողմից ներկայացնում է մի սուրբ և հնազանդ կին, որը պատրաստ է մինչև անգամ սկեսուրի ոտները լուանալ և կեղտոտ ջուրը խմել,—ընդհակառակը միւս կողմից նա երեւում է ինչպէս ինքնակամ և լեզուանի անձն, որ պատրաստ է սկեսուրի գլուխը ծեծել—«գլխին գնի»։ Ինչպէս բառ է՝ այս երեւոյթը ծայրայեղութիւն և յակադրութիւն է, որովհետեւ չէ կարելի լինել հնազանդ սուրբ և մի և նոյն ժամանակը բռնակալ (деспотъ).

Արդեօք վերջացնում ենք մեր յօդուածը։ Մեր [illegible] երգերի վերաբերմամբ չէ։ Ինչպէս վիպասանական (эпическій), լիրիկական այնպէս և ծէսական երգերի շատ նմուշները գտնել չէր դժուար մեր աշխարհագրի մէջ. Պատճառն այն է, որ մենք բոլորովին ի նկատի չունենք ժողովրդական ընթացումն մեր ժողովրդական բանաստեղծութիւնը և պատմագրելու նրա անցք երգերը։ Մեր գլխաւոր նպատակն է ցոյց տալ մեր ժողովրդական բանաստեղծութեան և գրականութեան նշանակութիւնը ընդհանուր եւրոպական կէտից և, բացի սրանից, ապացուցանել՝ թէ մեր ժողովուրդը զուրկ չէ բանաստեղծական ձիրքից. Նրա բանաստեղծութիւնը գնահատելու համար հարկաւոր է անդրադառնալ հասկանալ երգերի ներքին միտքը և այն լեզուն, որով նա արտայայտում է իր սրտի զգացմունքները։ Այս միտքը և մեր կարծիքը ապացուցանելու համար մենք բերինք մի քանի օրինակներ և այլատեսակներ, նրանց քննելով, բացատրել նրանց միտքը, որպէս զի աւելի հասկանալի լինեն ժողովրդական կեանքին անծանօթ ընթերցողների համար։ Այս պատճառաւ մենք աւելի յարմար գտանք նրանց թարգմանել։

Խնդրում ենք, ընթերցող, մեր համեստ աշխատութիւնն նայել ինչպէս մի փոքր բանագատական աշխատութեան մեր ժողովրդական գրականութեան. Մենք խոստովանում ենք, որ մեր աշխատութիւնը, ինչպէս առաջին փորձ, ունի թերութիւններ, մեզանից աւելի հմուտ և փորձառու անձինք կարող են աւարտել լիակատար և ընդարձակ կերպով քննադատել մեր ժողովրդական գրականութիւնը և գնահատել երգերը։ Իսկ որ չը լինեն մեր թերութիւնները և սխալները, բայց մենք դեռ յայտնում ենք մեր նշանաբանը թէ «ճշմարտութեան թշնամին սխալմունքը չէ, այլ անգործութիւնը.» ուստի աւելի յարմար և պատշաճաւոր ենք համարում «գործել և սխալվել, քան թէ բոլորովին չանել»։

Մոսկվա Սողոմոն Եղիազարեանց

---

*) Խոնչայ նշանակում է զանազան քաղցրեղէններից պատրաստած սեղան։

*) Ալ-ալ նշանակում է թարմ և յաղթական. Նա սկզբում ասում են «զարդս ալ է ցնում» ասելով-յաղթական. իսկ ձեռն նշանակում է չոր և անյաղթ. Նման «ալ» մարդ նշանակում է թարմ մարդ, իսկ «ձ ա խո չոր»։

*) Ընչեր ավանտուած ինչեր բառն է։

**) Լեզուն կէս զոզ նշանակում է երկարալեզու կամ ասածարկէն «լեզուանի»։ Լեզուանի անուանում է այն կինը, որը հնազանդ չէ ի միջոց հարսանորում է իր ամուսնի կամքին։

*) Նախուստ սառանկին տեսակ պարտառատ սեղան է, որը զոքն են առում քաղցրեղէնի ամանեղէն սկսոն։